ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02-Ը ՄԱՐՏԻ 2022 թվականի N 59 Ա

ՔԱՐԱԳԼՈՒԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ ԳԵՂԱՄ ԲԱԳՐԱՏԻ ԲԱԲԱԽԱՆՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄԻ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը, ***որոշում եմ՝***

Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի բնակիչ Գեղամ Բագրատի Բաբախանյանի /ընտանիքի գլխավորը/ և նրա ընտանիքի անդամ Սիմիկ Կարապետի Բաբախանյանի /մայրը/՝

1.սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը /վկ. 526222, կադաստրային ծածկագիր՝ 10-044-063-002, տարածքը՝ 0,048հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Քարագլուխ բնակավայր, 17 փողոց, 1-ին նրբ., տուն 6 հասցեն,

2.սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին /վկ. 526226, կադաստրային ծածկագիր՝ 10-044-089-015, տարածքը՝ 0,155հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Քարագլուխ բնակավայր, 12 փողոց, թիվ 14 հասցեն,

3.սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը /վկ. 526225, կադաստրային ծածկագիր՝ 10-044-036-006, տարածքը՝ 0,036հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Քարագլուխ բնակավայր, 18 փողոց, թիվ 48 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2022 թ. մարտի 02

հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03-Ը ՄԱՐՏԻ 2022 թվականի N 60 Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ համայնք Եղեգիս, Վարդահովիտ բնակավայր, 9 փողոց, թիվ 6 հասցեում կառուցված ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցները կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցների և դրանով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքով տրամադրումը չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ''Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի պահանջները և Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ հոդվածի դրույթները

որոշում եմ՝

Համայնք Եղեգիս, Վարդահովիտ բնակավայր, 9 փողոց, թիվ 6 հասցեում ինքնակամ կառուցված ստորև ներկայացված կառույցները և դրանց սպասարկման համար առանձնացված 1,26 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը արդյունաբերական օբյեկտների հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 10-041-0201-0221/ համարել Եղեգիս համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական /կցվում է շինությունների հատակագծերը/՝

1.շինություն /կոմպրեսորնի/ 241,2ք/մ,

2.արհեստանոց 272,23ք/մ,

3.շինություններ 678,31ք/մ,

4.շինություն 114,8ք/մ,

5.շինություն 80,11ք/մ,

6.պահակատուն 47,08ք/մ,

7.շինություն ծածկ 34,73ք/մ,

8.շինություն 37,98ք/մ,

9.շինություն 14,02ք/մ,

10.հենապատ 38,60ք/մ,

Ընդամենը՝ 1559,06ք/մ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2022 թ. մարտի 03

հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07-Ը ՄԱՐՏԻ 2022 թվականի N 61 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով

որոշում եմ՝

1.Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հետևյալ բնակավայրերի նշանակության այլ հողատեսքերը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն՝

1.1.կադաստրային ծածկագիր՝ 10-035-0037- , մակերեսը՝ 0.0028հա,
1.2.կադաստրային ծածկագիր՝ 10-035-0001- , մակերեսը՝ 0.09696հա,
1.3.կադաստրային ծածկագիր՝ 10-035-0001- , մակերեսը՝ 0.24755հա,
1.4.կադաստրային ծածկագիր՝ 10-035-0001- , մակերեսը՝ 0.04005հա:

2.Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հետևյալ բնակավայրերի նշանակության այլ հողատեսքը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն՝ կադաստրային ծածկագիր՝ 10-018-0001- , մակերեսը՝ 0.215հա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2022 թ. մարտի 07

հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09-Ը ՄԱՐՏԻ 2022 թվականի N 62 Ա

ՀԱՆԳՈՒՅՅԱԼ ՎՈԼՈԴՅԱ ՇՄԱՎՈՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄ ԱՄԱԼԻԿ ՍԻՄՈՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը

որոշում եմ՝

Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի նախկին բնակիչ հանգուցյալ Վոլոդյա Շմավոնի Գրիգորյանի /ընտանիքի գլխավորը/ և նրա ընտանիքի անդամ Ամալիկ Սիմոնի Հայրապետյանի /կինը/ սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին /վկ. 2446565, կադաստրային ծածկագիր՝ 10-035-047-003, տարածքը՝ 0,1135հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Շատին բնակավայր, 4 փողոց, թիվ 5 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2022 թ. մարտի 09

հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09-Ը ՄԱՐՏԻ 2022 թվականի N 63 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ մասով

որոշում եմ՝

Ստորև ներկայացված գույքը ներկայացնել ավագանու հաստատմանը և գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում՝

h/h	Ապրանքի անվանումը	քանակ, հատ հենասյուն	գին, ՀՀ դրամ
1.	Փողոցային լուսավորություն Շատին բնակավայրում	73	12 800 000
2.	Փողոցային լուսավորություն Արտաբույնք բնակավայրում	52	11 832 000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2022 թ. մարտի 09

ք.Եղեգիս